

**ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՊԱՀԱՆՁՆԵՐ**

**Ծառայությունների մատուցման հոդ ոճ**

**Դասընթաց 23 ապրիլի 2009թ.**

# ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

## Եվրոպայում՝

- ա) բարդ ներդրումային գործիքների առաջացումն ու տարածումը,
- բ) ներդրողների գիտելիքների անբավարարությունը,
- գ) Եվրոպական երկրներում համապատասխան դատական պրակտիկայի առաջացումը:

# ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

## Հայաստանում՝

- ա) արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրական դաշտի համապատասխանեցումը ԵՄ երկրորդային օրենսդրության պահանջներին,
- բ) Արժույթի Միջազգային Հիմնադրամի պահանջների ապահովում,
- բ) OMX-ի մուտքը ՀՀ արժեթղթերի շուկա:

# ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

## Եվրոպայում՝

- ա) ԵՄ 2004/39 հրահանգի ընդունումը, որը հայտնի է նաև որպես MiFID Directive ,
- բ) ԵՄ անդամ պետություններում դիրեկտիվով նախատեսված նորմերի կիրարկումն ապահովող նորմատիվ իրավական ակտերի ընդունում կամ փոփոխություն, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում փոփոխությունների ենթարկվեց Ֆինանսական ծառայությունների գործակալության կանոնադիրքը և այլն:

# ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

## Հայաստանում՝

- ա) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի ընդունում,
- բ) «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07:

# «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ

Օրենքի 27, 61, 64, 65, 66, 67, 69 և 70 հոդվածները, որոնք վերաբերվում են՝

- ա) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայություն մատուցողներին,
- բ) ներդրումային ծառայությունների մատուցման սահմանափակումներին,
- գ) ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերին,
- դ) հաճախորդներին տրամադրվող տեղեկատվությանը,
- ե) ներդրումային ծառայությունների մատուցման նկատմամբ պահանջներին,
- զ) հաճախորդների միջոցների հաշվարկմանն ու պաշտպանությանը,
- է) գրանցումներ վարելու պարտականությանը:

## Կանոնակարգ 4/07-ը

Կանոնակարգը նորմեր է սահմանում, որոնք կարգավորում են ծառայությունների մատուցման բոլոր փուլերը՝

- ա) գործարար հարաբերությունների հաստատումը,
- բ) ծառայությունների մատուցման բուն գործընթացը,
- գ) գործարար հարաբերությունը դադարեցնելուց հետո ներդրումային ընկերության նկատմամբ կիրառվող որոշակի պահանջներ:

## Գործարար հարաբերության հաստատումը...

**ՔԱՅԼ 1. Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը Հաճախորդը պետք է դասակարգվի որպես՝**

- ա) պրոֆեսիոնալ (որակավորված ներդրողներ),**
- բ) ոչ պրոֆեսիոնալ (մնացած հաճախորդները):**

**Պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջով նա կարող է դասակարգվել որպես ոչ պրոֆեսիոնալ (opt-out request):**



...գործարար հարաբերության հաստատումը...

**ՔԱՅԼ 2. Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը  
և ներդրումային ծառայությունների մատուցումը Հաճախորդներին  
պետք է տրամադրվի տեղեկատվություն հետևյալի մասին՝**

- ա) Ընկերության և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին,
- բ) արժեթղթերի մասին,
- գ) գործարքների կնքման վայրի (միջոցի) մասին,
- դ) համապատասխան ծախսերի և միջնորդավճարների մասին:

## ...գործարար հարաբերության հաստատումը...

**Տեղեկություններ Ընկերության և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին՝**

**(ա) տեղեկությունների տարբեր ծավալ արժեքների փաթեթի կառավարման և այլ ծառայությունների դեպքում,**

**(բ) տրամադրվող տեղեկությունների ծավալի տարբերություն կախված հաճախորդի տեսակից (պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ):**

## ...գործարար հարաբերության հաստատումը...

**Տեղեկություններ արժեթղթերի մասին՝**

- (ա) արժեթղթերի և դրանց հետ առնչվող ռիսկերի նկարագիր,**
- (բ) ազդագիրը ձեռք բերելու աղբյուրների վերաբերյալ տեղեկություններ,**
- (գ) երաշխավորի և երաշխավորության վերաբերյալ տեղեկություններ:**

**ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆ. պրոֆեսիոնալ հաճախորդներին այդ տեղեկատվությունը կարող է չտրամադրվել:**

## ...գործարար հարաբերության հաստատումը...

Տեղեկություններ ծախսերի և միջնորդավճարների մասին՝

- (ա) ծախսերի և միջնորդավճարների (միջնորդավճարներ, ծախսեր, հարկային և այլ վճարներ) համախառն գումարը,
- (բ) վճարման ձևը (ՀՀ դրամով կամ արտարժույթով),
- (գ) վճարման եղանակները (կանխիկ կամ բանկային փոխանցումով):

**ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆ.** պրոֆեսիոնալ հաճախորդներին այդ տեղեկատվությունը կարող է չտրամադրվել:

...գործարար հարաբերության հաստատումը...

**ՔԱՅԼ 3.** Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը անհրաժեշտ է ստանալ տեղեկություններ հաճախորդի մասին (customer due dilligence): Ստացվող տեղեկությունների ծավալը տարբերվում է կախված ծառայության տեսակից (simplified and sophisticated due dilligence):

...գործարար հարաբերության հաստատունը...

Sophisticated due dilligence-ը իրականացվում է հետևյալ ծառայությունների դեպքում`

(ա) արժեթղթերի փաթեթի կառավարում,

(բ) արժեթղթերում ներդրումներ կատարելու հետ կապված խորհրդատվության տրամադրում:

## ...գործարար հարաբերության հաստատումը...

Sophisticated due dilligence-ը ենթադրում է հետևյալ տեղեկությունների ստացումը՝

- (ա) ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքներ և փորձ,
- (բ) հաճախորդի ֆինանսական վիճակ,
- (գ) ներդրումային նպատակներ:

## ...գործարար հարաբերության հաստատումը...

Sophisticated due dilligence-ի շրջանակներում հաճախորդի կողմից տեղեկություններ չտրամադրելու (կամ ոչ բավարար տեղեկություններ տրամադրելու) դեպքում նրան տրվում է նախազգուշացում այն մասին, որ նրա վարքագիծը թույլ չի տալիս առաջարկել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ծառայություններ և արժեթղթեր, որոնք առավելագույնս համապատասխանում են հաճախորդի ցանկությանը: Տվյալ դեպքում ընկերությունն իրավունք չունի հորդորել որևէ արժեթղթում ներդրում կատարել: Նախազգուշացումը տրվում է Կանոնագրքի Հավելվածի Ձև 3-3(դ)-ին համապատասխան:



...գործարար հարաբերության հաստատումը...

Simplified due diligence-ը ենթադրում է ներդրումային ծառայության կամ արժեթղթի վերաբերյալ գիտալիքների և փորձի վերաբերյալ տեղեկություններ:

## ...գործարար հարաբերության հաստատումը...

Այն դեպքում, երբ simplified due dilligence-ի արդյունքում բացահայտված տեղեկությունների հիման վրա ընկերությունը գտնում է, որ տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը չի համապատասխանում հաճախորդի պահանջներին ընկերությունը զգուշացնում է հաճախորդին այդ մասին:

Նախազգուշացումը տրվում է Կանոնադրքի Հավելվածի Ձև 3-3(ա)-ին համապատասխան:

## ...գործարար հարաբերության հաստատումը...

Simplified due diligence-ի շրջանակներում հաճախորդի կողմից տեղեկություններ չտրամադրելու (կամ ոչ բավարար տեղեկություններ տրամադրելու) դեպքում նրան տրվում է նախազգուշացում այն մասին, որ նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է հաճախորդի պահանջներին:

Նախազգուշացումը տրվում է Կանոնադրքի Հավելվածի Ձև 3-3(դ)-ին համապատասխան:

## ...գործարար հարաբերության հաստատումը

**ՔԱՅԼ 4.** Մինչև ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը ընկերությունը պետք է հաճախորդին հնարավորությունը ընձեռի ծանոթանալու ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:

## Ծառայությունների մատուցման բուն գործընթացը...

Կանոնակարգի 46-րդ կետ.

*«Ներդրումային ծառայություններ մատուցող անձը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով...» (best execution)*

## ...ծառայությունների մատուցման բուն գործընթացը...

«*Best execution*» պարտավորությունը կատարելու համար ընկերությունը պետք է՝

(ա) ունենա հաճախորդների պատվերների կատարման քաղաքականություն,

(բ) հաճախորդի պատվերը կատարել կամ պատվերի առանձնահատուկ պայմանները՝ հետևելով հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներին:

## ...ծառայությունների մատուցման բուն գործընթացը...

**Պատվերների կատարման քաղաքականությունը պետք է ներառի՝**

**(ա) տեղեկատվություն գործարքների կնքման վայրերի (միջոցների) մասին,**

**(բ) այլ գործոններ, որոնք ընկերությունը հաշվի է առնում այդ վայրերի միջև ընտրություն կատարելիս՝ ըստ արժեթղթերի յուրաքանչյուր դասի:**

## ...ծառայությունների մատուցման բուն գործընթացը...

**ՔԱՅԼ 5. Ընկերությունը պետք է հաճախորդին տրամադրի հաշվետվություններ՝**

- (ա) կատարված պատվերի վերաբերյալ (այն կատարելու հաջորդ օրը),**
- (բ) արժեթղթերի փաթեթի մասին (եռամսյակային, իսկ հաճախորդի ցանկության դեպքում նաև ըստ յուրաքանչյուր գործարքի):**



## ...ծառայությունների մատուցման բուն գործընթացը

### ՔԱՅԼ 6. Այլ պարտականություններ՝

- (ա) պատվերների և ներդրումային որոշումների գրանցումը,
- (բ) կատարված գործարքների գրանցումը,
- (գ) փաստաթղթերի պահպանումը:

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ